# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<25>> ՓԵՏՐՎԱՐ 2021 ԹՎԱԿԱՆ N 01

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ-Ի ՓԵՏՐՎԱՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով, Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի փետրվարի 25-ի նիստի օրակարգը

Օրակարգ

Կաթնաջուր համայնքի ավագանու 2021թ.-ի փետրվարի 25-ի նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2020թ.-ի բյուջեի կատարման տարեկան և հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության մասին
2. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
3. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հարազատի մահվան հետ կապված ծախսերը հոգալու նպատակով տրամադրված օգնության վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդման մասին
4. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2021թ. տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Եղշադյան Պարսամ | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար _____ Արմեն Պապոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր 13 փ. 12.
հեռ. 099-00-03-02

## ՈՐՈՇՈՒՄ

«25» ՓԵՏՐՎԱՐ 2021 ԹՎԱԿԱՆ ԹԻՎ 02-Ն

## ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածներով.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Կաթնաջուր համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել 2020 թվականի Կաթնաջուր համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Եղշադյան Պարսամ | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Հավելված թիվ 2
Կաթնաջուր համայնքի ավագանու
2021թ.-ի փետրվարի 25-ի թիվ 02-Ն որոշման

Տեղեկատվություն
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2017-2021թթ.-ի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված 2020թ.-ի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, իրականացվել է << *ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի գերեզմանատան ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ*>> ծրագիրը, ընդհանուր 25121200 դրամ արժեքով, որից համայնքի կողմից ներդրվել է 11304540 դրամ:
2. Նույն ծրագրի շրջանակներում իրականացվել է <<*ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի փողոցների գիշերային լուսավորության համակարգը սնուցող 19.2 կվտ դրվածքային հզորությամբ մոնոբլուրեղային արևային վահանակներով ֆոտովոլտային կայանի և էներգախնայող LED տեսակի լուսատուներով հենասյուների կառուցում*>> *ծրագիրը՝ ընդհանուր 14486940 դրամ արժեքով, որից համայնքի կողմից կատարվելիք ներդրումը կազմել է 5794776 դրամ:*
3. Համայնքային բյուջեի միջոցներով կառուցվել է գերեզմանատան ճանապարհի փլուզումը կանխարգելող հենապատը 3850000 դրամ արժեքով:
4. Անասնապահության զարգացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում համայնքի բյուջեի միջոցներից անասնաբուժական ծառայություններ մատուցելու նպատակով աշխատանքային պայմանագիր է կնքվել և վճարվել 396000 դրամ:
5. Հողագործության զարգացման և ստացվող արտադրանքի արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով գործող սակագներից ցածր չափերով համայնքապետարանին պատկանող գյուղտեխնիկայով իրականացվել են կարտոֆիլի մշակության աշխատանքներ, կազմակերպվել է շուկայականից ցածր մեծածախ գներով պարարտանյութերի ներկրումը համայնք, աջակցություն է ցուցաբերվել ոռոգման աշխատանքներին:
6. Մեկնարկել է համայնքի համար կենսական նշանակություն ունեցող ճանապարհների 4,37 կմ-ի ասֆալտապատման աշխատանքները:
7. Հանրակրթական ուսուցման և նախադպրոցական դաստիարակության բարելավման նպատակով համայնքի բյուջեից 2650000 դրան դրամաշնորհ է տրամադրվել Կաթնաջրի <<Ս. Սեյրանյանի>> անվան միջնակարգ դպրոցին՝ նախակրթարանի գործունեությունն ապահովելու համար:
8. Համայնքում խմելու ջրի մատակարարման որակի բարձրացման, շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու նպատակով տեխնիկական աջակցություն ցուցաբերվել <<Կաթնաղբյուր>> ՀՈԱԿ-ին:

9. Փողոցների պահպանմանը և շահագործմանն ուղղված պարբերաբար իրականացվել են ճանապարհների խճապատման և ջրահեռացման համակարգերի մաքրման աշխատանքներ: Իրականացվել է ձմռան ամիսներին ճանապարհների ձյան մաքրման աշխատանքներ:
10. Հնարավոր աղետներից, մասնավորապես, ջրհեղեղներից զերծ մնալու նպատակով իրականացվեկլ են սելավատարների մաքրման աշխատանքներ:
11. Հայրենիքի պաշտպանության և բանակաշինությանն ուղղված աշխատանքներում ամենօրյա աջակցություն է ցուցաբերվել կազմակերպվող զորակոչին և զորահավաքներին:
12. Սոցիալ-պաշտպանության ոլորտում իրականացվել են անապահով 35 ընտանիքներին ֆինանսական միջոցների տրամադրում ընդհանուր՝ 1120000 դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Պապոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր 13 փ. 12.
հեռ. 099-00-03-02

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» ՓԵՏՐՎԱՐ 2021 ԹՎԱԿԱՆ N 03-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Եղշադյան Պարսամ | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու
2021թվականի փետրվարի 25-ի N 03-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Սիլվա Ահարոնի Գրիգորյանին երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացնել օգնություն 20000 (քսան հազար) դրամի չափով
2. Ալինա Աղվանի Հարությունյանին երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացնել օգնություն 20000 (քսան հազար) դրամի չափով
3. Մանուկյան Անիկ Տրաֆիլին որպես նյութապես անապահով ընտանիքի անդամ հատկացնել օգնություն 50000 (հիսուն հազար) դրամի չափով

ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ Վ. Վարդանյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր 13 փ. 12.
հեռ. 099-00-03-02

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«25» ՓԵՏՐՎԱՐ 2021 ԹՎԱԿԱՆ N 04

## ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆ ԵՐԻՆ ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշման 14 կետի պահանջները.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2021թ.-ի փետրվարի 18-ի թիվ 09 որոշմամբ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքի անդամներ Ռուբիկ Հարությունի Զաքարյանին և Արմեն Ֆերդինանտի Նիկողոսյանին հարազատի մահվան ծախսերը հոգալու նպատակով Կաթնաջուր համայնքի 2021թ.-ի բյուջեի 10/03/01/55 դասակարգման 4726 հոդվածից 50000 (հիսուն հազար)-ական ՀՀ դրամ հատկացնելու վերաբերյալ հաղորդումը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Եղշադյան Պարսամ | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր համայնքի ղեկավար՝ Արմեն Պապոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Կաթնաջուր համայնք, գ. Կաթնաջուր
հեռ. 099-00-03-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» փետրվարի 2021 թվական 05 -Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Կաթնաջուր համայնքի 2021թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Աղազարյան Ջիվան | | | |
| Եղշադյան Պարսամ | | | |
| Թորոսյան Մերուժան | | | |
| Ղազարյան Ազատ | | | |
| Ոսկանյան Մանվել | | | |
| Պապոյան Մանվել | | | |
| Սիմոնյան Գագիկ | | | |

Կաթնաջուր **համայնքի ղեկավար** _____ Արմեն Պապոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)